

**ԲԺՇԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ  
(ԴԵՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ)**

**1. ԴԵՂԻ ԱՆՎԱՆՈՒՄ**

Զաֆրիլա 2 մգ, դեղահատեր:

**2. ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄ**

2.1 Ընդհանուր նկարագրություն

Դիենոգեստ

2.2. Որակական և քանակական կազմ

Յուրաքանչյուր դեղահատը պարունակում է 2 մգ միկրոնիզացված դիենոգեստ:

Օժանդակ նյութեր. յուրաքանչյուր դեղահատը պարունակում է 62,8 մգ լակտոզայի մոնոհիդրատ:

Օժանդակ նյութերի ամբողջական ցանկը տես 6.1 բաժնում:

**3. ԴԵՂԱԶԵՎ**

Դեղահատեր:

Սպիտակ կամ գրեթե սպիտակ, տափակ մակերևույթով, երիզով, 7 մմ տրամագծով, կլոր դեղահատ, որի մի կողմում առկա է «G93» փորագրությունը, իսկ մյուս կողմում՝ «RG» փորագրությունը:

**4. ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ**

**4.1 Ցուցումներ**

Զաֆրիլա դեղը ցուցված է էնդոմետրիոզի բուժման համար:

**4.2. Դեղաչափման կարգ և կիրառման ձև**

Դեղաչափման կարգ

Նախքան Զաֆրիլա դեղով բուժում սկսելը պետք է դադարեցնել հորմոնային հակաբեղմնավորման ցանկացած եղանակի կիրառումը:

Զաֆրիլա դեղի կիրառումը կարելի է սկսել դաշտանային ցիկլի ցանկացած օր: Անհրաժեշտ է ամեն օր՝ առանց ընդմիջման ընդունել Զաֆրիլա դեղի 1 դեղահատ՝ նախընտրելի է նույն ժամին: Անհրաժեշտության դեպքում դեղահատը կարելի է ընդունել ջրով: Դեղահատերը պետք է ընդունել անընդմեջ՝ անկախ հեշտոցային արյունահոսությունների առկայությունից: Մեկ տուփի մեջ առկա դեղահատերի ընդունումն ավարտելուց հետո պետք է սկսել հաջորդ տուփի դեղահատերի ընդունումը՝ չընդհատելով դեղի կիրառումը:

Դեղահատի ընդունումը բաց թողնելու և փսխման և/կամ փորլուծության դեպքում (եթե դա տեղի է ունենում դեղահատի ընդունումից հետո՝ 3-4 ժամերի ընթացքում) Զաֆրիլա դեղի արդյունավետությունը կարող է նվազել: Մեկ կամ մի քանի դեղահատերի ընդունումը բաց թողնելու դեպքում կինը հիշելուն պես պետք է ընդունի մեկ դեղահատ, իսկ հաջորդ օրը դեղահատը պետք է ընդունի սովորական ժամին: Փսխման կամ փորլուծության արդյունքում չներծծված դեղահատի փոխարեն նույնպես անհրաժեշտ է ընդունել մեկ դեղահատ:

Դեղի ընդունումը կապված չէ սննդի ընդունման հետ:

Դեղի կիրառման արդյունավետությունը և անվտանգությունն ապացուցվել են 15 ամսից ոչ ավելի տևողությամբ բուժման արդյունքում:

Պացիենտների հատուկ խմբեր

*Տարեց (65 տարեկանից բարձր) պացիենտներ*

Տարեց պացիենտների շրջանում դեղի կիրառման համապատասխան հիմքեր առկա չեն:

*Լյարդային անբավարարություն ունեցող պացիենտներ*

Բուժման պահին կամ նախկինում լյարդի ծանր հիվանդությունների առկայության դեպքում Ջաֆրիլա դեղի կիրառումը հակացուցված է (տես 4.3 բաժինը):

*Երիկամային անբավարարություն ունեցող պացիենտներ*

Երիկամային անբավարարություն ունեցող պացիենտների համար դեղաչափի փոփոխման անհրաժեշտության վերաբերյալ տվյալներ առկա չեն:

*Երեխաներ և մինչև 18 տարեկան դեռահասներ*

Ջաֆրիլա դեղը ցուցված չէ աղջիկների շրջանում կիրառման համար՝ նախքան մենարխեի (առաջին դաշտանային ցիկլ) սկսվելը: Դիենոգեստի անվտանգությունը և արդյունավետությունը ցույց են տրվել կլինիկական փորձարկման արդյունքում՝ հաստատված կամ ենթադրյալ էնդոմետրիոզ ունեցող 111 դեռահաս (12-18 տարեկան) աղջիկների շրջանում 12 ամսից ավելի տևողությամբ՝ առանց ակտիվ հսկողության կիրառման դեպքում (տես 4.4 և 5.1 բաժինները):

Կիրառման

ձև

Դեղը նախատեսված է ներքին ընդունման համար:

**4.3. Հակացուցումներ**

Ջաֆրիլա դեղի կիրառումը հակացուցված է ստորև նշված վիճակներից որևէ մեկի առկայության դեպքում: Նշված հակացուցումները վերաբերում են բոլոր այն դեղերին, որոնք պարունակում են միայն գեստագենային բաղադրատարր: Եթե Ջաֆրիլա դեղի կիրառման դեպքում զարգանում է ստորև նշված վիճակներից որևէ մեկը, դեղի ընդունումը պետք է անհապաղ դադարեցնել.

- ակտիվ բաղադրատարրի կամ 6.1 բաժնում թվարկված օժանդակ նյութերից որևէ մեկի նկատմամբ գերզգայնություն,
- բուժման պահին երակային թրոմբոէմբոլիայի առկայություն,
- բուժման պահին կամ նախկինում սրտի և զարկերակների հիվանդությունների (օրինակ՝ սրտամկանի ինֆարկտ, ինսուլտ, սրտի իշեմիկ հիվանդություն) առկայություն,
- շաքարային դիաբետ՝ անոթների ախտահարմամբ,
- բուժման պահին կամ նախկինում լյարդի ծանր հիվանդությունների առկայություն՝ լյարդի ֆունկցիոնալ ցուցանիշների կարգավորման բացակայության պայմաններում,
- բուժման պահին կամ նախկինում լյարդի ուռուցքների (բարորակ կամ չարորակ) առկայություն,
- հաստատված կամ ենթադրյալ հորմոնակախյալ չարորակ ուռուցքներ,
- անհայտ ծագմամբ հեշտոցային արյունահոսություններ,

- գալակտոզայի անտանելիություն, լակտազայի ամբողջական անբավարարություն, գլյուկոզա-գալակտոզայի մալաբսորբցիա,
- կիրառում աղջիկների շրջանում՝ նախքան մենարխեի սկսվելը,
- հղիություն և կրծքով կերակրման շրջան (տես 4.6 բաժինը):

#### **4.4 Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ**

Նախքան Չաֆրիլա դեղի կիրառման մեկնարկը պետք է բացատրել հղիության առկայությունը: Չաֆրիլա դեղի կիրառման ընթացքում հակաբեղմնավորման անհրաժեշտության դեպքում պացիենտներին խորհուրդ է տրվում օգտագործել հակաբեղմնավորման ոչ հորմոնային (օրինակ՝ պատնեշային) եղանակներ:

Եթե բուժման պահին առկա է ստորն նշված վիճակներից որևէ մեկը կամ այն վատթարանում է, նախքան Չաֆրիլա դեղով բուժում մեկնարկելը կամ վերսկսելն անհրաժեշտ է իրականացնել օգուտ-ռիսկ հարաբերակցության անհատական գնահատում:

##### *Արյան շրջանառության խանգարում*

Միայն գեստագենային բաղադրատարր պարունակող դեղերի կիրառման և սրտամկանի ինֆարկտի կամ գլխուղեղի անոթների թրոմբոէմբոլիայի զարգացման ռիսկի բարձրացման միջև կապը հաստատելու համար համաճարակաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված փաստերը եղել են անբավարար: Միրտ-անոթային դրվագների և գլխուղեղի արյան շրջանառության խանգարման ռիսկն ամենայն հավանականությամբ կապված է բարձր տարիքի, զարկերակային գերճնշման և ծխելու հետ: Չարկերակային գերճնշում ունեցող կանանց շրջանում միայն գեստագենային բաղադրատարր պարունակող դեղի կիրառման ֆոնի վրա ինսուլտի զարգացման ռիսկը կարող է փոքր-ինչ բարձրանալ:

Որոշ փորձարկումների արդյունքում ցույց է տրվել միայն գեստագենային բաղադրատարր պարունակող դեղերի կիրառմամբ պայմանավորված երակային թրոմբոէմբոլիայի (խորանիստ երակների թրոմբոզ, թոքային զարկերակի էմբոլիա) զարգացման ռիսկի վիճակագրորեն ոչ նշանակալի բարձրացման հնարավորություն: Երակային թրոմբոէմբոլիայի զարգացման ռիսկի համընդհանուր ճանաչված գործոններից են՝ ընտանեկան համապատասխան պատմությունը (եղբոր, քրոջ կամ ծնողներից որևէ մեկի մոտ համեմատաբար վաղ տարիքում երակային թրոմբոէմբոլիայի առկայություն), տարիքը, ճարպակալումը, երկարատև անշարժությունը, լայնածավալ վիրաբուժական միջամտությունը կամ խոշոր վնասվածքը: Երկարատև անշարժության դեպքում (պլանավորված վիրահատության դեպքում՝ վիրահատությունից 4 շաբաթ առաջ) խորհուրդ է տրվում դադարեցնել Չաֆրիլա դեղի կիրառումը, և դեղի ընդունումը վերսկսել միայն շարժողական ակտիվության ամբողջական վերականգնումից 2 շաբաթ անց:

Հետծննդաբերական շրջանում պետք է նկատի ունենալ թրոմբոէմբոլիայի զարգացման բարձր ռիսկը: Չարկերակային կամ երակային թրոմբոզի ախտանիշների զարգացման կամ դրա կասկածի դեպքում դեղի կիրառումը պետք է անմիջապես դադարեցնել:

##### *Ուռուցքներ*

Համաճարակաբանական 54 հետազոտությունների մետա վերլուծությունը բացահայտել է փորձարկման պահին ներքին ընդունման հակաբեղմնավորիչներ՝ առավելապես էստրոգեն-պրոգեստագենային դեղեր ընդունող կանանց շրջանում կրծքագեղձի

քաղցկեղի զարգացման հարաբերական ռիսկի ( $Z\Omega=1,24$ ) ոչ մեծ բարձրացում: Այս բարձրացած ռիսկն աստիճանաբար անհետանում է ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչների կիրառման դադարեցումից հետո՝ 10 տարվա ընթացքում:

Քանի որ 40 տարեկանից ցածր կանանց շրջանում կրծքագեղձի քաղցկեղը հազվադեպ է հանդիպում, տվյալ պահին կամ անցյալում ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչներ ընդունած կանանց շրջանում նմանատիպ ախտորոշումների քանակի որոշակի ավելացման հավանականությունը մեծ չէ՝ կրծքագեղձի քաղցկեղի առաջացման ռիսկի ընդհանուր ցուցանիշի համեմատ:

Միայն պրոգնոստագեն պարունակող դեղեր ընդունող կանանց շրջանում կրծքագեղձի քաղցկեղի բացահայտման ռիսկը մեծությամբ հավանաբար համադրելի է ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչների կիրառման հետ կապակցված համապատասխան ռիսկի հետ: Սակայն, միայն պրոգնոստագենային բաղադրատարր պարունակող դեղերին վերաբերող փաստերը հիմնված են դրանք ընդունող կանանց՝ թվով ավելի փոքր պոպուլյացիաների վրա, և հետևաբար, ավելի պակաս համոզիչ են՝ ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչների վերաբերյալ տվյալների համեմատ:

Նշված փորձարկումների արդյունքում պատճառահետևանքային կապի վերաբերյալ ապացույցներ չեն ստացվել: Ռիսկի բարձրացման բացահայտված պատկերը կարող է լինել ներքին ընդունման հակաբեղմնավորիչներ ընդունող կանանց շրջանում կրծքագեղձի քաղցկեղի ավելի վաղ ախտորոշման արդյունք, ներքին ընդունման հակաբեղմնավորիչների կենսաբանական ազդեցություն կամ նշված երկու գործոնների համադրություն:

Հորմոնային հակաբեղմնավորիչներ ընդունող կանանց շրջանում կրծքագեղձի քաղցկեղն ախտորոշվում է ավելի վաղ կլինիկական փուլերում՝ նշված դեղերը երբեք չօգտագործած կանանց համեմատ:

Զաֆրիլա դեղի ակտիվ բաղադրատարրին նման հորմոնային նյութերի ընդունման ֆոնի վրա հազվադեպ նշվել են լյարդի բարորակ և ավելի հազվադեպ՝ չարորակ ուռուցքներ: Առանձին դեպքերում նշված ուռուցքները հանգեցրել են կյանքին սպառնացող ներորովայնային արյունահոսությունների առաջացմանը: Եթե Զաֆրիլա դեղն ընդունող կնոջ մոտ դիտվում են ուժեղ ցավեր որովայնի վերին հատվածում, լյարդի մեծացում կամ ներորովայնային արյունահոսության նշաններ, ապա տարբերակիչ ախտորոշման դեպքում պետք է նկատի ունենալ լյարդի ուռուցքի առկայության հավանականությունը:

#### *Արյունահոսությունների բնույթի փոփոխություն*

Կանանց մեծամասնության շրջանում Զաֆրիլա դեղի կիրառումը ազդում է դաշտանային արյունահոսությունների բնույթի վրա:

#### *Արգանդային ծանր արյունահոսություն*

Զաֆրիլա դեղի կիրառման ֆոնի վրա, օրինակ՝ արգանդի ադենոմիոզ կամ լեյոմիոմա ունեցող կանանց շրջանում, արգանդային արյունահոսությունները կարող են ուժեղանալ: Առատ և երկարատև արյունահոսությունները կարող են առաջացնել սակավարյունություն (որոշ դեպքերում՝ ծանր սակավարյունություն): Նման դեպքերում պետք է դիտարկել Զաֆրիլա դեղի կիրառումը դադարեցնելու հարցը:

## *Ոսկրահյուսվածքի միներալային խտության փոփոխություն*

### *Դեռահաս աղջիկներ*

Դեռահասների (12-18 տարեկան) շրջանում Չաֆրիլլա դեղով բուժման 12 ամիսների ընթացքում դիտվել է գոտկային հատվածի (L2-L4) ոսկրահյուսվածքի միներալային խտության իջեցում: Միջինում, ոսկրահյուսվածքի միներալային խտությունը բուժման ավարտին մոտ ելակետային մակարդակից նվազել է 1,2%-ով՝ 5%-ից մինչև 6%-ի միջակայքում (95% հավաստիության միջակայքը՝ -1,7% և -0,78%, n=103):

Դիենոգեստով բուժման ավարտից 6 ամիս անց ոսկրահյուսվածքի միներալային խտության նվազած ցուցանիշներ ունեցողների ենթախմբում կրկնակի չափումը ցույց է տվել առողջացման միտում: Ելակետային մակարդակի համեմատ՝ միջին հարաբերական փոփոխությունը դիենոգեստով բուժման ավարտին եղել է -2,3%, իսկ դիենոգեստով բուժման ավարտից 6 ամիս անց եղել է -0,6%՝ -9%-ից մինչև 6%-ի միջակայքում (95% հավաստիության միջակայքը՝ -1,2%-ից մինչև 0,06% (n=60)):

Ոսկրահյուսվածքի միներալային խտության իջեցումը հատուկ մտահոգություն է առաջացնում դեռահասային և բարձր դեռահասային տարիքում, քանի որ նշված տարիքը հատկապես կարևոր շրջան է ոսկորների աճի համար: Հայտնի չէ՝ արդյոք ոսկրահյուսվածքի միներալային խտության իջեցումը նշված պոպուլյացիայի շրջանում ազդում է ոսկրային առավելագույն զանգվածի վրա, և արդյոք այն հետագայում բարձրացնում է կոտրվածքների ռիսկը:

### *Չափահասներ*

Օստեոպորոզի բարձր ռիսկ ունեցող պացիենտների շրջանում Չաֆրիլլա դեղի կիրառումից առաջ անհրաժեշտ է մանրակրկիտորեն գնահատել օգուտ-ռիսկ հարաբերակցությունը, քանի որ 2 մգ դիենոգեստով բուժման ընթացքում էնդոգեն էստրոգենի մակարդակը չափավոր նվազում է: Ցանկացած տարիքի կնոջ համար կայցիումի և D վիտամինի ընդունումը կարևոր է՝ անկախ որոշակի սննդակարգին հետևելու կամ վիտամինային հավելումներ ընդունելու հանգամանքից:

### *Այլ վիճակներ*

Նախկինում դեպրեսիա ունեցած պացիենտներն ուշադիր հսկողության կարիք ունեն: Եթե դեպրեսիայի կրկնությունը լուրջ բնույթ է կրում, ապա դեղի կիրառումը պետք է դադարեցնել:

Դիենոգեստոն ամենայն հավանականությամբ չի ազդում նորմալ զարկերակային ճնշում ունեցող կանանց զարկերակային ճնշման վրա: Սակայն, եթե Չաֆրիլլա դեղի կիրառման ֆոնի վրա ի հայտ է գալիս կլինիկորեն նշանակալի զարկերակային կայուն գերճնշում, խորհուրդ է տրվում դադարեցնել դեղի կիրառումը և նշանակել հակազերճնշումային բուժում:

Առաջին անգամ հղիության ընթացքում կամ նախկինում սեռական հորմոնների կիրառման ֆոնի վրա ի հայտ եկած լեղականգային դեղնախտի և/կամ լեղականգային քորի կրկնության դեպքում Չաֆրիլլա դեղի կիրառումը պետք է դադարեցնել:

Դիենոգեստը կարող է ոչ նշանակալի ազդեցություն թողնել ծայրամասային ինսուլինակայունության և գլյուկոզայի նկատմամբ տանեթիոլային վրա: Շաքարային դիաբետ ունեցող կանայք, հատկապես՝ նախկինում հղիության ընթացքում դիաբետի առկայության դեպքում, Չաֆրիլլա դեղի ընդունման ընթացքում ուշադիր հսկողության կարիք ունեն:

Որոշ դեպքերում հնարավոր է խլոազմայի առաջացում, հատկապես՝ հղիության ընթացքում խլոազմա ունեցած կանանց շրջանում: Խլոազմայի զարգացման հակվածությունն ունեցող կանանց խորհուրդ է տրվում Ջաֆրիլա դեղի ընդունման ընթացքում խուսափել արևի կամ ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունից:

Ջաֆրիլա դեղի ընդունման ընթացքում ձվարաններում կարող են ի հայտ գալ *գերիշխող ֆոլիկուլներ* (հաճախ այսպես կոչված՝ ձվարանների ֆունկցիոնալ կիստաներ): Մեծամասամբ նման ֆոլիկուլների առկայությունը կրում է անախտանիշ բնույթ, չնայած, որոշները կարող են ուղեկցվել ցավով կոնքի շրջանում:

#### *Բուժզննություն*

Ջաֆրիլա դեղի ընդունումը մեկնարկելուց կամ վերսկսելուց առաջ անհրաժեշտ է մանրամասն ծանոթանալ պացիենտի հիվանդության պատմության հետ և իրականացնել ֆիզիկական ու գինեկոլոգիական զննություն: Նշված զննությունների հաճախականությունը և բնույթը պետք է հիմնված լինեն բժշկական պրակտիկայի գործող նորմերի վրա՝ անհրաժեշտության դեպքում (սակայն ոչ հազվադեպ, քան 3-6 ամիսը մեկ անգամ) հաշվի առնելով յուրաքանչյուր պացիենտի անհատական առանձնահատկությունները, և պետք է ներառեն զարկերակային ճնշման չափումներ, կրծքագեղձերի, որովայնային խոռոչի օրգանների և կոնքային օրգանների վիճակի զննահատում, այդ թվում՝ արգանդի վզիկի էպիթելի բջջաբանական հետազոտություն:

#### *Այս դեղը պարունակում է լակտոզա:*

Ջաֆրիլա դեղի յուրաքանչյուր դեղահատը պարունակում է 62,8 մգ լակտոզայի մոնոհիդրատ: Հազվադեպ ժառանգական խանգարումներ (օրինակ՝ լակտոզայի անտանելիություն, լակտազայի բացարձակ անբավարարություն կամ գլյուկոզ-գալակտոզայի մալաբսորբցիա) ունեցող պացիենտները, որոնք հետևում են լակտոզա չպարունակող սննդակարգի, պետք է հաշվի առնեն Ջաֆրիլա դեղի բաղադրության մեջ առկա լակտոզայի քանակը:

#### **4.5 Փոխազդեցություններն այլ դեղերի հետ կամ այլ բնույթի փոխազդեցություններ**

Ծանոթագրություն. հնարավոր փոխազդեցությունների բացահայտման համար պետք է նաև ծանոթանալ զուգահեռ օգտագործվող դեղերի կիրառման վերաբերյալ տեղեկությունների հետ:

#### *Այլ դեղերի ազդեցությունը Ջաֆրիլա դեղի վրա*

Գեստագենները, այդ թվում՝ դիենոգեստր, նյութափոխանակվում են առավելապես P450 3A4 ցիտոքրոմային համակարգի՝ ադիների լորձաթաղանթում և լյարդում տեղակայված իզոֆերմենտների (CYP3A4) մասնակցությամբ: Հետևաբար, CYP3A4 իզոֆերմենտների խթանիչները կամ արգելակիչները կարող են ազդել գեստագենային դեղերի մետաբոլիզմի վրա:

Մեռական հորմոնների արտազատման՝ ֆերմենտների խթանմամբ պայմանավորված ուժեղացումը կարող է նվազեցնել Ջաֆրիլա դեղի բուժական ազդեցությունը, ինչպես նաև՝ առաջացնել կողմնակի ազդեցություններ, օրինակ՝ արգանդային արյունահոսությունների բնույթի փոփոխություն:

Մեռական հորմոնների արտազատման՝ ֆերմենտների արգելակմամբ պայմանավորված նվազեցումը կարող է մեծացնել դիենոգեստի էքսպոզիցիան և առաջացնել կողմնակի ազդեցություններ:

*Մեռական հորմոնների արտազատումն ուժեղացնող դեղեր (արդյունավետության իջեցում ֆերմենտների խթանման միջոցով)*

Ֆենիտոին, բարբիտուրատներ, պրիմիդոն, կարբամազեպին, ռիֆամպիցին և հնարավոր է նաև օքսկարբազեպին, տոպիրամատ, ֆելբամատ, գրիզեոֆուլվին, ինչպես նաև ծակոտկեն սրոհունդ պարունակող դեղեր:

Որպես կանոն, ֆերմենտների խթանում դիտվում է բուժումը սկսելուց մի քանի օր անց: Առավելագույն խթանումը դիտվում է մի քանի շաբաթ անց, որը հետագայում՝ բուժումը դադարեցնելուց հետո՝ 4 շաբաթների ընթացքում կարող է պահպանվել:

CYP3A4 իզոֆերմենտի խթանիչ ռիֆամպիցինի ազդեցությունն ուսումնասիրվել է հետդաշտանադադարային փուլում գտնվող առողջ կանանց շրջանում: Էստրադիոլ վալերիատ/դիենոգեստ պարունակող դեղահատերի և ռիֆամպիցինի միաժամանակյա կիրառման դեպքում դիտվել է դիենոգեստի և էստրադիոլի հավասարակշռային կոնցենտրացիայի ու համակարգային էքսպոզիցիայի էական նվազում:  $AUC_{0-24}$  մեծությամբ որոշվող հավասարակշռային կոնցենտրացիայի դեպքում դիենոգեստի ու էստրադիոլի համակարգային էքսպոզիցիան նվազել է համապատասխանաբար՝ 83%-ով և 44%-ով:

*Մեռական հորմոնների արտազատման վրա փոփոխական ազդեցություն ցուցաբերող դեղեր*

Մեռական հորմոնների հետ միաժամանակյա կիրառման դեպքում մարդու իմունիտետի անբավարարության վիրուսի (ՄԻՄՎ) և հեպատիտ C-ի բուժման նպատակով կիրառվող շատ դեղեր և հետադարձ տրանսկրիպտազայի ոչ նուկլեոզիդային արգելակիչները կարող են բարձրացնել կամ իջեցնել պրոգեստինների կոնցենտրացիան արյան պլազմայում: Որոշ դեպքերում նման փոփոխությունները կարող են լինել կլինիկորեն նշանակալի:

*Մեռական հորմոնների արտազատումը նվազեցնող դեղեր (ֆերմենտների արգելակիչներ)*

Դիենոգեստը P450 (CYP) 3A4 ցիտոքրոմի ֆերմենտների սուբստրատ է:

CYP3A4 իզոֆերմենտի հզոր և չափավոր արգելակիչները, օրինակ՝ ազոլային հակասնկային դեղերը (իտրակոնազոլ, վորիկոնազոլ, ֆլուկոնազոլ), վերապամիլը, մակրոլիդները (կլարիթրոմիցին, էրիթրոմիցին), դիլթիազեմը և թուրինջի (գրեյպֆրուտ) հյութը, կարող են բարձրացնել գեստագենների կոնցենտրացիաներն արյան պլազմայում:

CYP3A4 իզոֆերմենտի արգելակիչների (կետոկոնազոլ, էրիթրոմիցին) ազդեցության ուսումնասիրությանն ուղղված մի փորձարկման շրջանակում էստրադիոլ վալերիատի և դիենոգեստի հավասարակշռային կոնցենտրացիաներն արյան պլազմայում եղել են բարձրացած: Հզոր արգելակիչ կետոկոնազոլի հետ դիենոգեստի միաժամանակյա կիրառման արդյունքում  $AUC_{0-24}$ -ը բարձրացել է 2,86 անգամ՝ դիենոգեստի հավասարակշռային կոնցենտրացիայի դեպքում: CYP3A4 իզոֆերմենտի չափավոր արգելակիչ էրիթրոմիցինի և դիենոգեստի միաժամանակյա կիրառման արդյունքում  $AUC_{0-24}$ -ը բարձրացել է 1,62 անգամ՝ դիենոգեստի հավասարակշռային կոնցենտրացիայի դեպքում: Նշված փոխազդեցությունների կլինիկական նշանակությունը հայտնի չէ:

*Դիենոգեստի ազդեցությունն այլ դեղերի վրա*

*In vitro* պայմաններում արգելակման հետազոտությունների տվյալների համաձայն՝ P450 ցիտոքրոմային համակարգի ֆերմենտների միջոցով նյութափոխանակվող այլ դեղերի և Չաֆրիլլա դեղի միջև կլինիկորեն նշանակալի փոխազդեցությունը քիչ հավանական է:

*Փոխազդեցություն սննդամթերքի հետ*

Ճարպերի բարձր պարունակությամբ սննդի ընդունումը չի ազդել Չաֆրիլլա դեղի կենսամատչելիության վրա:

*Այլ փոխազդեցություններ*

Գետազենների կիրառումը կարող է ազդել որոշ լաբորատոր հետազոտությունների արդյունքների, այդ թվում՝ լյարդի, վահանաձև գեղձի, մակերիկամների և երիկամների ֆունկցիայի կենսաքիմիական ցուցանիշների, սպիտակուցների (կրիչներ) (օրինակ՝ ճարպերի/ճարպասպիտակուցների ֆրակցիաներ) պլազմային կոնցենտրացիաների, ածխաջրային փոխանակության ցուցանիշների և մակարդելիոլոյան ու ֆիբրինոլիզի ցուցանիշների վրա: Փոփոխությունները սովորաբար պահպանվում են նորմայի սահմաններում:

#### **4.6. Վերարտադրողականություն, հղիություն և կրծքով կերակրման շրջան**

*Հղիություն*

Հղի կանանց շրջանում դիենոգեստի կիրառման փորձը շատ սահմանափակ է: Կենդանիների շրջանում իրականացված հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները չեն բացահայտել վերարտադրողական թունայնություն, զենաթունայնություն և քաղցկեղածին ազդեցություն: Սակայն, Չաֆրիլլա դեղը չի կարելի նշանակել հղի կանանց՝ հաշվի առնելով, որ հղիության ընթացքում էնդոմետրիոզի բուժման անհրաժեշտություն չկա:

*Կրծքով կերակրման շրջան*

Խորհուրդ չի տրվում Չաֆրիլլա դեղը կիրառել կրծքով կերակրման շրջանում, քանի որ կենդանիների վրա իրականացված հետազոտությունների արդյունքում հաստատվել է, որ դիենոգեստն արտազատվում է կրծքի կաթի միջոցով: Կրծքով կերակրելը դադարեցնելու կամ Չաֆրիլլա դեղով բուժումը դադարեցնելու որոշումը պետք է կայացնել՝ հաշվի առնելով երեխայի համար կրծքով կերակրման օգուտի և կնոջ համար բուժումից ակնկալվող օգուտի հարաբերակցությունը:

*Վերարտադրողականություն*

Առկա տվյալները վկայում են այն մասին, որ Չաֆրիլլա դեղի կիրառման դեպքում կանանց մեծամասնության շրջանում ձվազատումն ընկճվում է: Այնուամենայնիվ, Չաֆրիլլան հակաբեղմնավորիչ դեղ չէ:

Հակաբեղմնավորման անհրաժեշտության դեպքում պացիենտներին խորհուրդ է տրվում կիրառել հակաբեղմնավորման ոչ հորմոնային մեթոդներ (տես 4.2 բաժինը):

Չաֆրիլլա դեղի հակաբեղմնավորիչ արդյունավետության ուսումնասիրության փորձարկումներ չեն իրականացվել, սակայն 20 կանանց մասնակցությամբ փորձարկման արդյունքում ցույց է տրվել, որ դիենոգեստի 2 մգ դեղաչափը բուժման մեկնարկից 1 ամիս անց ընկճում է ձվազատումը:

Առկա տվյալները վկայում են այն մասին, որ դաշտանային ցիկլը կարգավորվում է Չաֆրիլլա դեղի կիրառման դադարեցումից հետո՝ 2 ամսվա ընթացքում:



Արտարգանդային հղիության զարգացման հավանականությունը բարձր է հակաբեղմնավորման նպատակով միայն գեստագենային բաղադրատարր պարունակող դեղեր ընդունող կանանց շրջանում՝ ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչներ ընդունող կանանց համեմատ: Այսպիսով, նախկինում արտարգանդային հղիություն կամ արգանդային փողերի անանցանելիություն ունեցած կանանց բուժումը Ջաֆրիլա դեղով պետք է սկսել միայն օգուտ/ոխակ հարաբերակցության մանրակրկիտ գնահատումից հետո:

Քանի որ Ջաֆրիլա դեղը պարունակում է միայն գեստագենային բաղադրատարր, կարելի է ենթադրել, որ միայն գեստագեն պարունակող դեղերի համար հաստատված հատուկ հրահանգները և նախազգուշացումները վերաբերում են նաև Ջաֆրիլա դեղին, չնայած դիենոգեստի կլինիկական փորձարկումներում ոչ բոլոր նախազգուշացումներն են հաստատվել:

#### **4.7. Ազդեցությունը փոխադրամիջոցներ վարելու և սարքավորումների հետ աշխատելու կարողությունների վրա**

Ջաֆրիլա դեղը բացասաբար չի ազդում փոխադրամիջոցներ վարելու և սարքավորումների հետ աշխատելու կարողությունների վրա: Այնուամենայնիվ, ադապտացիայի փուլում (Ջաֆրիլա դեղի կիրառման առաջին 3 ամիսների ընթացքում) ուշադրության կենտրոնացման խանգարումներ ունեցող կանայք պետք է դրսևորեն զգուշություն:

#### **4.8 Կողմնակի ազդեցություններ**

Կողմնակի ազդեցություններն առավել հաճախ ի հայտ են գալիս Ջաֆրիլա դեղի կիրառման առաջին ամիսների ընթացքում, և հետագայում դրանց քանակը նվազում է: 2 մգ դեղաչափով դիենոգեստի կիրառման ընթացքում առավել հաճախ հանդիպող կողմնակի ազդեցություններն են՝ գլխացավը (9%), կրծքագեղձերում անհանգստության զգացողությունը (5,4%), տրամադրության անկումը (5,1%) և ակնեն (5,1%):

Նաև, 2 մգ դիենոգեստի դեղահատեր ընդունող պացիենտների մեծ մասը նշել է դաշտանային արյունահոսությունների բնույթի փոփոխության մասին: Դաշտանային արյունահոսությունների բնույթը կանոնավոր գնահատվել է պացիենտների օրագրի կիրառման միջոցով և վերլուծվել է՝ օգտագործելով ԱՀԿ-ի կողմից երաշխավորված 90-օրյա ռեֆերենտ ժամանակահատվածի մեթոդը:

2 մգ դիենոգեստի դեղահատերով բուժման առաջին 90 օրերի ընթացքում դիտվել են դաշտանային արյունահոսությունների բնույթի հետևյալ փոփոխությունները (n=290, 100%). դաշտանի բացակայություն (ամենորեա) (1,7%), ոչ հաճախակի արյունահոսություններ (27,2%), հաճախակի արյունահոսություններ (13,4%), անկանոն արյունահոսություններ (35,2%), երկարատև արյունահոսություն (38,3%), նորմալ արյունահոսություն, այսինքն՝ վերոնշյալ կատեգորիաներից ոչ մեկը (19,7%): Չորրորդ հսկիչ փուլի ընթացքում դիտվել են դաշտանային արյունահոսությունների բնույթի հետևյալ փոփոխությունները (n=149, 100%). դաշտանի բացակայություն (ամենորեա) (28,2%), ոչ հաճախակի արյունահոսություններ (24,2%), հաճախակի արյունահոսություններ (2,7%), անկանոն արյունահոսություններ (21,5%), երկարատև արյունահոսություն (4%), նորմալ արյունահոսություն, այսինքն՝ վերոնշյալ կատեգորիաներից ոչ մեկը (22,8%): Պացիենտները դաշտանային

արյունահոսությունների բնույթի փոփոխության մասին հայտնել են միայն որպես կողմնակի ազդեցություն (տես կողմնակի ազդեցությունների աղյուսակը):

Աղյուսակում կողմնակի ազդեցությունների ցանկը ներկայացված է ըստ օրգան-համակարգերի դասերի: Հաճախականության յուրաքանչյուր խմբում կողմնակի ազդեցությունները ներկայացված են ըստ հանդիպման հաճախականության նվազման: Հաճախականությունը որոշվում է հետևյալ կերպ. հաճախ ( $\geq 1/100$ , սակայն  $< 1/10$ ) և ոչ հաճախ ( $\geq 1/1000$ , սակայն  $< 1/100$ ):

Կողմնակի ազդեցությունների հանդիպման հաճախականությունը հիմնված է 332 պացիենտ (100%) ներգրավող 4 կլինիկական փորձարկումների միասնական տվյալների վրա:

**Աղյուսակ.** *Կլինիկական փորձարկումների ընթացքում կանանց շրջանում դիտարկված կողմնակի ազդեցություններ*

Օրգան-համակարգային դաս	Հաճախ	Ոչ հաճախ
Արյան և ավշային համակարգի խանգարումներ		Սակավարյունություն
Մետաբոլիզմի և սնուցման խանգարումներ	Մարմնի քաշի ավելացում	Մարմնի քաշի նվազում, ախորժակի բարձրացում:
Հոգեկան խանգարումներ	Ընկճված տրամադրություն, քնի խանգարում (այդ թվում՝ անքնություն), նյարդայնություն, լիբիդոյի կորուստ, տրամադրության փոփոխություն:	Տագնապ, դեպրեսիա, տրամադրության տատանումներ:
Նյարդային համակարգի խանգարումներ	Գլխացավ, միգրեն:	Վեգետատիվ նյարդային համակարգի խանգարում, ուշադրության խանգարում:
Աչքի խանգարումներ		Աչքերի չորության զգացողություն:
Ականջի և ներքին ականջի խանգարում		Աղմուկ ականջներում:
Սրտի խանգարումներ		Արյան շրջանառության չճշտված խանգարում, սրտխփոցի

		զգացողություն:
Անոթային խանգարումներ		Զարկերակային գերճնշում:
Շնչական համակարգի, կրծքավանդակի և միջնորմային օրգանների խանգարումներ		Հնոց:
Ստամոքս-աղիքային խանգարումներ	Սրտխառնոց, ցավ որովայնում (այդ թվում՝ որովայնի ստորին և վերին հատվածներում), մետեորիզմ, որովայնի փքվածություն, փսխում:	Փորլուծություն, փորկապություն, անհանգստություն որովայնի շրջանում, ստամոքս-աղիքային ուղու բորբոքային հիվանդություններ, լնդերի բորբոքում (գինգիվիտ):
Մաշկի և ենթամաշկային հյուսվածքների խանգարումներ	Ակնե, մազաթափություն (ալոպեցիա):	Մաշկի չորություն, գերքրտնարտադրություն, քոր, մազերի աճի շեղումներ, (այդ թվում՝ հիրսուտիզմ, հիպերտրիխոզ և օնիխոկլազիա), թեփոտություն, դերմատիտ, լուսազգայնության ռեակցիաներ, պիգմենտացիայի խանգարում:
Կմախք-մկանային և շարակցական հյուսվածքի խանգարումներ	Ցավ գոտկատեղում:	Ոսկրային ցավ, մկանային կծկանքներ, ցավ վերջույթներում, ծանրության զգացողություն վերջույթներում:
Երիկամների և միզուղիների խանգարումներ		Միզուղիների վարակներ (այդ թվում՝ միզապարկի բորբոքում):
Վերարտադրողական համակարգի և	Կրծքագեղձերում անհանգստության զգացողություն (այդ թվում՝	Հեշտոցի կանդիդոզ, հեշտոցի և վուլվայի

կրծքագեղձի խանգարումներ	կրծքագեղձերի մեծացում և ցավ կրծքագեղձերում), ձվարանի կիստա (այդ թվում՝ հեմոռագիկ կիստա), «տոթի» զգացողություն, արգանդային արյունահոսություններ/արյունահոսություններ հեշտոցից (այդ թվում՝ արյունային «քսող» արտադրություն, միջդաշտանային արյունահոսություն (մետրոռագիա), առատ դաշտան (մենոռագիա), անկանոն արյունահոսություններ), դաշտանի բացակայություն (ամենորեա):	շրջանում չորություն (լորձաթաղանթի չորություն), արտադրություն սեռական ուղիներից, ցավ կոնքի շրջանում, ատրոֆիկ վուլվովագինիտ, ֆիբրոզ-կիստոզային մաստոպաթիա, կրծքագեղձերի պնդացում:
Ընդհանուր խանգարումներ և փոփոխություններ կիրառման տեղում	Ասթենիկ վիճակներ (այդ թվում՝ հոգնածություն, ասթենիա և սկարություն), դյուրագրգռելիություն:	Այտուց (այդ թվում՝ դեմքի այտուց):

**Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում**

Հետզբանցումային փուլում կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին հաղորդելը կարևոր է: Դա հնարավորություն է տալիս շարունակաբար գնահատել դեղի կիրառմամբ պայմանավորված ռիսկերի և ակնկալվող օգուտի հարաբերակցությունը: Առողջապահության համակարգի մասնագետները կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին կարող են առցանց հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ [www.pharm.am](http://www.pharm.am) հղումով կամ զանգահարել թեժ գիծ. հեռախոսահամարներ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

**4.9. Գերդեղաչափում**

Գերդեղաչափման դեպքում լուրջ խանգարումների վերաբերյալ հաղորդումներ չեն եղել: Դիենոգեստի սուր թունայնության ուսումնասիրության փորձարկումներում մի քանի օրական դեղաչափերի պատահական ընդունման դեպքում սուր կողմնակի ազդեցությունների զարգացման ռիսկ չի բացահայտվել: Դիենոգեստի 20-30 մգ օրական դեղաչափերի (Չաֆրիլլա դեղի թույլատրված դեղաչափերը 10-15 անգամ գերազանցող դեղաչափեր) ավելի քան 24 շաբաթ տևողությամբ կիրառումը եղել է լավ տանելի:

Գերդեղաչափման դեպքում կարող են դիտվել հետևյալ ախտանիշները. սրտխառնոց, փսխում, արյունային «քսող» արտադրություն, միջդաշտանային արյունահոսություն (մետրոռագիա): Հատուկ հակաթույն առկա չէ: Գերդեղաչափման դեպքում պետք է իրականացնել ախտանիշային բուժում:

**5. ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ**

**5.1 Դեղադինամիկա**

**Դեղաբուժական խումբ**

Սեռական հորմոններ և սեռական համակարգի մոդուլատորներ: Պրոգեստագեններ: Պրեգնադիենի ածանցյալներ: Դիենոգեստ:

## Անատոմիական-բուժական-քիմիական ծածկագիր

G03DB08

### 5.1.1 Ազդեցության մեխանիզմ

Դիենոգեստն ազդում է էնդոմետրիոզի վրա՝ նվազեցնելով ձվարանների կողմից էստրոգենների արտադրությունը և դրանց կոնցենտրացիաներն արյան պլազմայում, ինչի արդյունքում ընկճվում է էստրոգենների սնուցող ազդեցությունն էուտոպիկ և էկտոպիկ էնդոմետրիումի վրա:

Երկարատև կիրառման դեպքում դիենոգեստն առաջացնում է էնդոմետրիումի հյուսվածքի նախնական դեցիդուալիզացիա, որից հետո առաջանում է էնդոմետրիոզային օջախների սնուցման խանգարում: Ամենայն հավանականությամբ, իմունոլոգիական և հակաանգիոգենային լրացուցիչ հասկությունները նպաստում են դիենոգեստի՝ բջիջների պրոլիֆերացիան ընկճող ազդեցությանը:

### 5.1.2 Դեղադինամիկական ազդեցություններ

Դիենոգեստը նորտեստոստերոնի ածանցյալ է՝ օժտված հակաանդրոգենային ակտիվությամբ, որը կազմում է ցիպրոտերոն ագեստատի ակտիվության մոտ մեկ երրորդ մասը: Դիենոգեստը, պրոգեստերոնի նկատմամբ ունենալով միայն 10% հարաբերական խնամակցություն, կապվում է մարդու արգանդի պրոգեստերոնային ընկալիչների հետ: Չնայած պրոգեստերոնային ընկալիչների նկատմամբ ցածր խնամակցությանը, *in vivo* պայմաններում դիենոգեստը ցուցաբերում է հզոր պրոգեստատիկ ազդեցություն: *In vivo* պայմաններում դիենոգեստն օժտված չէ էական անդրոգենային, միներալակորտիկոիդային կամ գլյուկոկորտիկոիդային ակտիվությամբ:

### 5.1.3 Կլինիկական արդյունավետություն և անվտանգություն

198 պացիենտների ներգրավմամբ և 3 ամիս տևողությամբ կլինիկական փորձարկման արդյունքում բացահայտվել է 2 մգ դիենոգեստի առավելությունը՝ պլացեբոյի համեմատ, կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավի առումով: Կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավը գնահատվել է վիզուալ անալոգիայի սանդղակով (0-100 մմ): Բուժումից 3 ամիս անց ցույց է տրվել վիճակագրորեն նշանակալի տարբերության առկայություն դիենոգեստի և պլացեբոյի միջև ( $\Delta=12,3$  մմ, 95% հավաստիության միջակայքը՝ 6,4 - 18,1,  $p<0,0001$ ), ինչպես նաև՝ ցավի կլինիկորեն նշանակալի մեղմացում՝ էլակետային ցուցանիշների համեմատ (միջին արժեքը՝ 27,4 մմ  $\pm$  22,9):

Բուժումից 3 ամիս անց կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավի ինտենսիվության՝ 50 և ավելի բարձր տոկոսով մեղմացում՝ առանց ցավազրկողների ընդունման անհրաժեշտության համապատասխան մեծացման, ապահովվել է պացիենտների 37,3%-ի շրջանում (պլացեբոյի 19,8%-ի համեմատ), կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավի՝ 75 և ավելի բարձր տոկոսով մեղմացում՝ առանց ցավազրկողների ընդունման անհրաժեշտության համապատասխան մեծացման, ապահովվել է պացիենտների 18%-ի շրջանում (պլացեբոյի 7,3%-ի համեմատ):

Նշված պլացեբո-հսկվող փորձարկման երկարացված բաց փուլում երկարատև (15 ամիս) բուժման դեպքում ստացվել են կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավի երկարաժամկետ մեղմացման ապացույցներ (2 մգ

դիենոգեստով բուժման փուլի ավարտին ցավի ինտենսիվության մեղմացման միջին ցուցանիշը կազմել է 43,2±21,7 մմ):

Բացի այդ, էնդոմետրիոզով պայմանավորված ցավի բուժման նպատակով 2 մգ դիենոգեստի կիրառման արդյունավետությունը ցույց է տրվել 6-ամսյա փորձարկման ընթացքում, որտեղ 2 մգ դիենոգեստի (ընդունել են 120 պացիենտ) արդյունավետությունը համեմատվել է գոնադատրոպին ռիլիզինգ հորմոնի ազոնիստ լեյկոպրոբեղին ացետատի արդյունավետության հետ: Կոնքի շրջանում էնդոմետրիոզով պայմանավորված ցավը գնահատվել է վիզուալ անալոգիայի սանդղակով (0-100 մմ): Ելակետային ցուցանիշների համեմատ՝ ցավի կլինիկորեն նշանակալի մեղմացում դիտվել է երկու խմբերում (2 մգ դիենոգեստի խմբում՝ 47,5±28,8 մմ և լեյկոպրոբեղին ացետատի խմբում՝ 46±24,8 մմ): Ցույց է տրվել 2 դիենոգեստի ոչ պակաս արդյունավետությունը լեյկոպրոբեղին ացետատի համեմատ ( $p < 0,0001$ )՝ հիմք ընդունելով նախապես որոշված ոչ պակաս արդյունավետության՝ 15 մմ մակարդակը: Օրական 2 մգ դիենոգեստ ընդունող՝ ընդհանուր առմամբ 252 պացիենտի ներգրավմամբ երեք փորձարկումների արդյունքում ցույց է տրվել էնդոմետրոիդային օջախների էական փոքրացում բուժումից 6 ամիս անց:

Ռանդոմիզացված կրկնակի կույր փորձարկման գուգահեռ խմբերում (յուրաքանչյուր խմբում  $n=20-23$ ) առավելագույնը 72 օրերի ընթացքում ուսումնասիրվել է դիենոգեստի 4 դեղաչափերի (օրական 0,5 մգ, 1 մգ, 2 մգ և 3 մգ) դեղադինամիկական ազդեցությունները: Ձվազատում դիտվել է դիենոգեստի 0,5 մգ և 1 մգ դեղաչափերի խմբերում՝ կանանց համապատասխանաբար 14%-ի և 4%-ի շրջանում: Դիենոգեստի 2 մգ և 3 մգ դեղաչափերի խմբերում ձվազատում չի գրանցվել: 2 մգ դեղաչափի խմբում դեղի կիրառումը դադարեցնելուց հետո՝ 5 շաբաթների ընթացքում ձվազատումը հաստատվել է կանանց 80%-ի շրջանում: Առավել խոշոր փորձարկումներում դիենոգեստի հակաբեղմնավորիչ ազդեցությունը չի ուսումնասիրվել:

#### *Անվտանգության վերաբերյալ տվյալներ*

2 մգ դիենոգեստով բուժման դեպքում էնդոգեն էստրոգենի արտադրությունը չափավոր ընկճվում է:

2 մգ դիենոգեստ ընդունող պացիենտների շրջանում ոսկրահյուսվածքի միներալային խտության և կոտրվածքների ռիսկի վերաբերյալ երկարաժամկետ փորձարկումների տվյալներն այս պահին անհասանելի են: Ոսկրահյուսվածքի միներալային խտությունը գնահատվել է 21 չափահաս պացիենտների շրջանում՝ 2 մգ դիենոգեստով բուժումից առաջ և դրանից 6 ամիս անց, ընդ որում, ոսկրահյուսվածքի միներալային խտության միջին ցուցանիշի նվազում չի նշվել: Նույն ժամանակահատվածով լեյկոպրոբեղին ացետատ ընդունող 20 պացիենտի շրջանում գրանցվել է ոսկրահյուսվածքի միներալային խտության՝ միջինում 4,04% ± 4,84-ով նվազում (խմբերի միջև տարբերությունը = 4,29%; 95% հավաստիության միջակայքը՝ 1,93–6,66,  $p < 0,0003$ ):

2 մգ դիենոգեստի՝ մինչև 15 ամիս տևողությամբ կիրառման դեպքում ստանդարտ լաբորատոր ցուցանիշների, այդ թվում՝ արյան ընդհանուր և կենսաքիմիական ցուցանիշների, «յարդային» ֆերմենտների, ճարպերի և գլիկոլիզացված հեմոգլոբինի էական շեղումներ չեն նշվել:

#### *5.1.4 Երեխաներ*

Էնդոմետրիոզի ախտանիշների (ցավ կոնքի շրջանում, ցավոտ դաշտան (դիսմենոռեա), ցավոտ սեռական ակտ (դիսպարեունիա)) բուժման նպատակով դեռահասների շրջանում 2 մգ դիենոգեստի արդյունավետությունն ուսումնասիրվել է 12 ամիս տևողությամբ և 111 դեռահաս աղջիկների (առաջին դաշտանային ցիկլն ունեցած 12-18 տարեկան աղջիկներ) ներգրավմամբ փորձարկման ընթացքում:

12 ամիս տևողությամբ և 103 դեռահաս աղջիկների ներգրավմամբ փորձարկման արդյունքում ողնաշարի գոտկային հատվածի (L2-L4) ոսկրահյուսվածքի միներալային խտության հարաբերական միջին փոփոխությունը՝ ելակետային ցուցանիշների համեմատ, կազմել է -1,2%: Ոսկրահյուսվածքի ցածր միներալային խտություն ունեցող պացիենտների ենթախմբում դիենոգեստով բուժման ավարտից 6 ամիս անց իրականացվել է ևս մեկ չափում, որը ցույց է տվել ոսկրահյուսվածքի միներալային խտության բարձրացում՝ մինչև -0,6%:

## **5.2 Դեղակիներտիկա**

### **5.2.1 Ներծծում**

Ներքին ընդունումից հետո դիենոգեստն արագորեն և գործնականում ամբողջովին ներծծվում է: Արյան պլազմայում առավելագույն՝ 47 նգ/մլ կոնցենտրացիան հասնում է միանվագ ներքին ընդունումից մոտ 1,5 ժամ անց: Կենսամատչելիությունը կազմում է մոտավորապես 91%: 1-8 մգ դեղաչափերի դեպքում դիենոգեստի դեղակիներտիկան բնորոշվում է դեղաչափակախախտությամբ:

### **5.2.2 Բաշխում**

Դիենոգեստը կապվում է շիճուկային ալբումինի հետ և չի կապվում սեռական հորմոնները կապող գլոբուլինի, ինչպես նաև՝ կորտիկոստերոիդները կապող գլոբուլինի հետ: Արյան պլազմայում դեղի ընդհանուր կոնցենտրացիայի 10%-ը ազատ ստերոիդի ձևով է, մինչդեռ մոտ 90%-ը ոչ սպեցիֆիկորեն կապված է ալբումինի հետ:

Դիենոգեստի բաշխման ենթադրյալ ծավալը (Vd/F) կազմում է 40 լիտր:

### **5.2.3 Կենսափոխակերպում**

Դիենոգեստը առավելապես հիդրօքսիլացման ուղիով և համարյա ամբողջությամբ նյութափոխանակվում է՝ առաջացնելով գործնականում ոչ ակտիվ մի քանի մետաբոլիտ: *in vitro* և *in vivo* հետազոտությունների արդյունքների համաձայն՝ դիենոգեստի նյութափոխանակությանը մասնակցող հիմնական ֆերմենտը CYP3A4-ը է: Մետաբոլիտներն արտազատվում են շատ արագ, հետևաբար արյան պլազմայում գերակշռող ֆրակցիան անփոփոխ դիենոգեստն է:

Արյան պլազմայից նյութափոխանակային արտազատման արագությունը (Cl/F) բոլորում կազմում է 64 մլ:

### **5.2.4 Արտազատում**

Դիենոգեստի կոնցենտրացիան արյան պլազմայում նվազում է երկու փուլով: Սահմանային փուլում արտազատման կիսափուլը մոտավորապես 9-10 ժամ է: 0,1 մգ/կգ դեղաչափով ներքին ընդունումից հետո դիենոգեստը մետաբոլիտների ձևով արտազատվում է երիկամների և աղիների միջոցով՝ մոտավորապես 1:3 հարաբերակցությամբ: Երիկամների միջոցով մետաբոլիտների արտազատման կիսափուլը կազմում է մոտ 14 ժամ: Ներքին ընդունումից հետո դեղաչափի մոտ 86%-ն արտազատվում է 6 օրվա ընթացքում, ընդ որում, հիմնական մասն արտազատվում է առաջին 24 ժամերի ընթացքում՝ առավելապես երիկամների միջոցով:

### 5.2.5 Գծայնություն (ոչ գծայնություն)

Դիենոգեստի դեղակինետիկական կախված չէ սեռական հորմոնները կապող գլոբուլինի մակարդակներից: Սմենոյա կիրառումից հետո դիենոգեստի կոնցենտրացիան արյան պլազմայում աճում է մոտավորապես 1,24 անգամ՝ հավասարակշռային կոնցենտրացիային հասնելով ընդունումից 4 օր անց: 2 մգ դեղաչափով դեղահատերի բազմակի կիրառումից հետո դիենոգեստի դեղակինետիկական հնարավոր է կանխատեսել՝ հիմք ընդունելով միանվագ կիրառումից հետո ստացված դեղակինետիկական ցուցանիշները:

### **5.3 Նախակլինիկական անվտանգության տվյալներ**

Դեղաբանական անվտանգության, բազմակի դեղաչափերի թունայնության, զենաթունայնության, քաղկեղածին ազդեցության, վերարտադրողական և օնտոգենետիկական թունայնության ուսումնասիրության ստանդարտ փորձարկումների արդյունքում ստացված նախակլինիկական տվյալների համաձայն՝ մարդու օրգանիզմի համար հատուկ վտանգ չի բացահայտվել: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ սեռական հորմոնները կարող են նպաստել հորմոնակախյալ որոշակի հյուսվածքների և ուռուցքների աճին:

## **6. ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ**

### **6.1 Օժանդակ նյութեր**

Լակտոզայի մոնոհիդրատ,  
Էգիպտացորենի նախաժելատինացված օսլա,  
միկրոբյուրեղային ցելյուլոզա,  
պոլիդոն K-25,  
կրոսպոլիդոն (տիպ A),  
տալկ,  
մագնեզիումի ստեարատ:

### **6.2 Անհամատեղելիություններ**

Կիրառելի չէ:

### **6.3 Պիտանիության ժամկետ**

3 տարի:

Դեղը չի կարելի կիրառել պիտանիության ժամկետի ավարտից հետո:

### **6.4 Պահման հատուկ պայմաններ**

Լույսից պաշտպանելու համար բլիստերը պետք է պահել դեղի տուփի մեջ:

Դեղի պահման համար ջերմաստիճանային հատուկ պայմաններ չեն պահանջվում:

### **6.5 Փաթեթի բնութագրիչներ**

Պոլիվինիլքլորիդային թաղանթից և ալյումինե նրբաթիթեղից պատրաստված բլիստերը պարունակում է 14 դեղահատ:

2 բլիստերները տեղադրված են ստվարաթղթե տուփի մեջ՝ ներդիր թերթիկի հետ միասին:

### **6.6 Օգտագործված դեղի մնացորդի կամ թափոնների ոչնչացման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ**

Չօգտագործված դեղերը և թափոնները ոչնչացվում են ՀՀ օրենսդրության համաձայն:



## **7. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ**

Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ,  
Հունգարիա, 1103, Բուդապեշտ, Դյոմրոի փ., 19-21,  
Էլ փոստ՝ [mrp@richter.hu](mailto:mrp@richter.hu),  
հեռախոս՝ +36 1 431-4000:

### **7.1 Գրանցման հավաստագրի իրավատիրոջ ներկայացուցչություն Հայաստանի համար**

Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Մոսկովյան ներկայացուցչություն  
Ռուսաստանի Դաշնություն  
119049, ք. Մոսկվա, Դոբրինինսկի 4-րդ նրբանցք, տուն 8  
Էլ փոստ՝ [drugsafety@g-richter.ru](mailto:drugsafety@g-richter.ru)  
հեռախոս՝ +7-495-363-39-50

## **8. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԱՄԱՐ**

### **9. ԱՌԱՋԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ**

### **10. Տեքստի վերանայման ամսաթիվ**

11 սեպտեմբեր 2019

Զաֆրիլա դեղի բժշկական կիրառման հրահանգը հասանելի է ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կայքում՝ [www.pharm.am](http://www.pharm.am):

## ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ЛЕКАРСТВЕННОГО ПРЕПАРАТА

### 1. НАИМЕНОВАНИЕ ЛЕКАРСТВЕННОГО ПРЕПАРАТА

Зафриллa, 2 мг, таблетки

### 2. КАЧЕСТВЕННЫЙ И КОЛИЧЕСТВЕННЫЙ СОСТАВ

#### 2.1. Общее описание

Диеногест

#### 2.2. Качественный и количественный состав

Каждая таблетка содержит 2 мг диеногеста микронизированного.

Вспомогательные вещества: каждая таблетка содержит 62.80 мг лактозы моногидрата.

Полный перечень вспомогательных веществ представлен в разделе 6.1.

### 3. ЛЕКАРСТВЕННАЯ ФОРМА

Таблетки.

Таблетки белого или почти белого цвета, круглой формы, с плоской поверхностью, с фаской и гравировкой на одной стороне «G93», на другой стороне «RG», диаметром 7 мм.

### 4. КЛИНИЧЕСКИЕ ДАННЫЕ

#### 4.1. Показания к применению

Лечение эндометриоза.

#### 4.2. Режим дозирования и способ применения

##### Режим дозирования

Любая гормональная контрацепция должна быть прекращена до начала приема препарата Зафриллa.

Прием препарата Зафриллa можно начинать в любой день менструального цикла. Зафриллa принимают по 1 таблетке в сутки без перерыва, предпочтительно в одно и то же время каждый день, при необходимости запивая водой. Таблетки следует принимать непрерывно вне зависимости от кровотечений из влагалища. После завершения приема таблеток из одной упаковки начинают прием таблеток из следующей упаковки, не делая перерыва в приеме препарата.

При пропуске таблеток и в случае рвоты и/или диареи (если это происходит в пределах 3-4 ч после приема таблетки) эффективность препарата Зафриллa может снижаться. В случае пропуска одной или нескольких таблеток женщине следует принять одну таблетку, как только она об этом вспомнит, а затем на следующий день продолжить прием таблеток в обычное время. Вместо таблетки, которая не абсорбировалась вследствие рвоты или диареи, также следует принять одну таблетку.

Связь приема препарата с приемом пищи отсутствует.

Эффективность и безопасность применения препарата доказана при длительности терапии не более 15 месяцев.

##### Особые группы пациенток

##### *Пациентки пожилого возраста (старше 65 лет)*

Нет соответствующих оснований для применения препарата Зафриллa у пациенток пожилого возраста.

##### *Пациентки с печеночной недостаточностью*

